Փուճը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի. — Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կէս արծաթ Մեճիս կամիքիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ իր արուարձանաց եւ թէ՛ գաւառաց համար։ — Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։ — Հասը 40 փարայէ, եւ կը գտնուի մասնաւորապէս Պահչէ-Գաբու օրավաճառ եւ գրավաճառ Մկրտիչ եւ Նշան աղայից խանութներէն։—Ծանուցման տողը 3 դրօ. է մէկ անգամիճար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

ՀԱՍՑԷ

Օր. Տնօրէն—Տէր Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

Պալըգ—Բազար Նաֆիյէ խան վերի յարկ թիւ 16

ՓՈՒՂԱԿ

درعلیه‌ده بالق پازارنده نافعه خانسده اوست قاتده
١٦ نومرولی اوطه‌ده {پونچ} غزته‌سی صاحب امتیازی
حمپارسوم آلاجاجیانه

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du Journal Armenien
POUNTCH
16 Nafié—Han Balouk—Pazar 16
CONSTANTINOPLE

ԹԻՒ 2686 ՇԱԲԱԹ 1863— 1866— 1900 ԱՊՐԻԼ 1

ԵՐԿՈՒ ԽՈՇՈՐ ԲԱՐՈՑԱՓԷՏ ԹՈՒՅՍՈՒՈՅ ԵՒ ՇԱՆՇԵԱՆ

—ο—

Նամեհանի հետ տեսակցութիւն (*)

Իմ բոլոր ուժեն հարցմունքներիս պատասխանները ստանալէ վերջը, ես սկսեցի հետաքրքրուիլ Պ. Պետրոս Շանշեանի գրաւոր աշխատութիւններով։

— Իմ գրաւոր աշխատութիւնները են՝ «Թիֆլիսի համքարները» և «Եղիշէի թարգմանութիւնը»։ Առաջինէ քեզ մի օրինակ տամ. իսկ միւսը սպառուած է,—ասաց ու իսկոյն գնաց և բերեց ինձ իրեւ ընծայ մի օրինակ «Թիֆլիսի համքարները», որն ես մեծ շնորհակալութեամբ ընդունեցի։

— Այժմ գրաւոր աշխատութիւններով չէ՞ք զբաղուիր,—հարցրի ես։

— Մարդկանց ուսուցանելու համար բաւական է գործը և խօսքը, Քրիստոս ալ գործեց, և քարոզեց կենդանի խօսքով. իսկ մեռեալ ու սպանիչ գիրը նա անտես արաւ։

— Բայց մենք՝ ձեզմէ շատ հեռու բնակուողներս՝ որքա՜ն ծարաւ ենք ձեր բարոյական բարձր մտքերը ու դատողութիւնները լսելու և ձեր կենցաղավարութիւնը տեսնելու՝ ձեզ հետեւելու նպատակով։ Ինչո՞ւ ձեզ ես, որպէս ճշմարիտ կուսակրօնի, երբեմն չի չրջագայիլ մօտակայ կամ հեռակայ գիւղերը ու քաղաքները՝ Քրիստոսի Աստուածային բարոյագիտութիւնը մեզ սովորեցնելու նպատակով։ Եւ ես գլխաւորապէս այս նպատակով եկած եմ ձեզ մօտ, որ հրաւիրեմ ձեզ Նուչի՝ տեղական հայոց հոգեւոր Սեմինարիայի մէջ տեսչի պաշտօնը ստանձնելու համար։ Ես իմ պաշտօնը ձեզ սիրով կը յանձնեմ՝ ինդրելով Թողուլ ղիս ձեզ օգնական։ Այսպէս վարուելով, ես մեծ բարիք արած կը լինիմ՝ թէ՛ Սեմինարիային և թէ՛ Նուչոյ 4000 տուն հայ յարգելի ժողովրդներին։ Դուք մեր զաւակներին և մեզ՝ բարոյագիտութեամբ վառելով՝ կը սովորեցնէք անշուշտ և կենցաղավարել քարոզչական գլխաւոր նպատակն է։ Կրկին, կրկին կը խնդրեմ ձեզմէ՝ մի՛ բացասէք ինձ և ընդունեցէք այժմեանէ Նուչոյ Սեմինարիայի տեսչական իմ պաշտօնը, որին դուք չատ աւելի արժանի էք, քան թէ ես, որ կարօտ է ձեզմէ սովորելու թէ՛ քարոզագիտութիւնը եւ թէ՛ կենցաղավարելու քարոզագիտաբար...։ Եւ երկրի թագաւորութիւնը այն ժամանակ միայն կսկսի, երբ մարդիկս կը սկսենք բարոյագիտաբար կենցաղավարել...։ Երանի՛ ձեզ, որ ձեր այս առանձնացած տան մէջ այդ թագաւորութիւնը սկսուած է... ձեր ճշմարիտ կուսակրօնական, բարձր բարոյագիտական կենցաղավարութեամբ...։ Ես բոլորովին համոզուած եմ, որ ինչպէս մարմնով ձեր չորս հիւանդները շուտով բժշկուելու են և բոլորովին առողջ տուն վերադառնալու, այնպէս ալ հոգւով հիւանդները — մարդասպանները, աւազակները, վաչխառուները, խաբեբաները, հարբեցողները, հպարտները, նախանձոտները, գողերը, ծոյլերը, իգամոլները, պճնամոլները և չքեղասէրները — շուտով կը բժշկուին և կը դառնան օգտակար անդամներ հասարակութեան՝ լսելով ձեր բարոյագիտական զօրեղ խօսքերը և տեսնելով ձեր զօրեղագոյն բարոյագիտութեամբ յի կենցաղավարութիւնը...։

— Զգածուելով ես ասացի և սկսեցի արտասուել...։ Փիչ հանդարտուելէ վերջը՝ ես շարունակեցի՝ — երանի՛ Թիֆլիսի հայ — հոգեւորականութեան՝ իւր Առաջնորդով միասին, որ ձեզ մօտ լինելով կարող է միշտ ձեզմէ սովորիլ՝ թէ ի՞նչպէս պէտք է կարդալ, հասկանալ և կատարել Աւետարանի անգին խօսքերը, որոնց մէջ արևի պէս կը փայլի Քրիստոսի վարդապետութիւնը — բարոյագիտութեան բարձր իդեալը... որն մեզ անդադար կը մղէ դէպ ի կատարեալ Աստուածասիրութիւն և մարդասիրութիւն...։ Մինչդեռ մենք աշխարհականներս մեզ՝ կեանքի իդեալ ենք ընտրած արծաթասիրութիւնը և իշխասիրութիւնը, արծաթասիրութիւնը և ծիսասիրութիւնը... մինչդեռ դարձել է կեանքի նպատակ հոգեւորականներուն համար...։

— Հանդարտուեցէք, — ընդմիջեց ինձ Պ. Շանշեանը — երկնքի թագաւորութիւնը անյաղթելի կերպով կը յառաջադիմէ երկրիս վրայ. մենք մարդիկս անզօր ենք նորան կանգնեցնելու...։ Մեծ մագնիսի դիմաց փոշրիկ ասեղը չի կարող չգրաւուիլ։

—Այո՛, ես կը հաւատամ, որ իւրաքանչիւր ճշմարիտ բարոյագէտ իւր ժամանակակիցների համար միեւնոյնն է, ինչպէս ծանրակշիռ մագնիսը փոքրիկ ասեղի համար։

—Պ. Մովսէս, ես շատ կը ցաւիմ, որ չեմ կարող յանձն առնուլ ձեր առաջարկած Տեսչական ձեր պաշտօնը՝ Նուչոյ Սեմինարիայի մէջ, —տխուր դէմքով, աչքերը վար արած, գլուխը խորհրդաւոր կերպով քիչ շարժելով ասաց Պ. Շանշեանը։

—Ես ձեզ իմ բնակարանի մէջ մի-երկու սենեակ կը յատկացնեմ և ամբողջ ընտանիքովս կը ծառայինք ձեզ իբրեւ իմ տան հարազատ հօր եւ ճշմարիտ բարոյագէտ ուսուցչին...։ Ես եւ կինս մի կողմէ և մատաղահաս զաւակներս միւս կողմէ պատրաստ ենք ձեզ աշակերտելու...։

—Կախուսամ՝ չա՜տ, որ անկարող եմ ձեր առաջարկութիւնը ընդունելու։ Եւ գնացինք ղբօսնելու դէպ ի մօտակայ անտառը, դեռ տակ ափը եւ աղբիւրը։ Եւ այս միջոցին հոգւոյս այնքան վրդոված էի, որ անցած տեղերս չէի նկատեր. բայց կը զգայի՝ որ մտքերի տարօրինակ կուտակումէ՝ սրտիս ցաւերը... ընդունելը... կը բազմապատկուէին ամէն վայրկեան... ամէն րոպէ։ Ինչպէս յորդ անձրեւէ յետոյ կազմուած հեղեղը՝ քարեր գլորելով... թումբեր քանդելով յառաջ կ'երթայ, այնպէս ալ իմ ըղուխիւնը քանդուելց յորդ մտքերիս ալեկոծումէ, եւ ժայթկեց բերնէս արտասուալից...։

—Դուն ինձ համար Քրիստոսի կատարեալ աշակերտն ես, որովհետեւ Նորա վարդապետութեան Հոգւոյն համեմատ կը կենցաղավարես։ Ինչպէս Նա ձրիաբար սովորեցրեց բարոյագիտութիւն, ձրիաբար կը բժշկեր մարդկանց, այնպէս ալ դուն կ'անես...։ Ինչպէս Նա կարողացաւ բոլոր սրտով սիրել մարդկանց՝ նամանաւանդ մեղաւորներին, յանցաւորներին՝ և փառաւորապէս զոհեց իւր Անձը՝ բարոյագիտութեան բեղուն սերմերը մեր բթացած մտքերի եւ քարացած սրտերի մէջ խոր ցանելու համար, այնպէս ալ դուն ունիս չնորհք և կարողութիւն սիրել մարդկանց՝ նամանաւանդ մեղաւորներին։ Ինչպէս Նա իրեն խաչողներին, իւր թշնամիներին բոլոր սրտով ներեց՝ իբրեւ իւրեանց արածները չգիտցողներ, չհասկացողներ, այնպէս ալ դուն նեղող ես իրեն արած-չարածը չգիտցող, չհասկացողներին։ Ինչպէս Քրիստոս շատ հասկանալի կերպով ուսանդել, դասախօսել և քարոզել է բարոյագիտութիւնը ժողովրդներուն բոլոր դասակարգերին, նոյնպէս եւ դուն հեռու միտք բթացնող, սիրտ քարացնող, ծիսասիրութիւն միայն տարածող և պղտորութիւն ձգող ամէն տեղ «աստուածաբանութենէ—նոյն բարոյագիտութիւնը ամենապարզ ու բնական լեզուով կը բացատրես, կ'ուսանդես, կը դասախօսես եւ կը քարոզես ամէն դասակարգի պատկանող մարդկանց...։ Ինչպէս Քրիստոս բարոյապէս բոլորովին ընկած—մեռած—մարդկանց բոլորովին բարոյական մարդիկ կը դարձներ—կը կենդանացներ—, այնպէս ալ դուն քո պարզ բարոյագիտութիւնով և բարոյագիտական կենցաղավարութիւնով որքա՜ն մարդկանց կենդանութիւն տուած ես...։ Ինչպէս Քրիստոս ճշմարիտ կուսակրօն էր... ճշմարիտ կոյս էր մարմնով և մտքով, արդեօք դուն եւս նոյն ամենաբարձր նպատակի ձգտող չե՞ս...։

—Ես կը խնդրեմ, Պ. Սամուէլեան՛, հանդարտուեցէք և մի՛ վրդովուիք. լաւ է այս ծառի տակ փոքր ինչ մեզ նստիլ և զբաղուիլ այն բնութիւնով, որը Քրիստոս կերպով ուսումնասիրողը կարող է մտովս եւ սրտով Քրիստոս կերպով ուսումնասիրել եւ ճանաչել Նորա Աստղածողը—մեր երկնաւոր Հայրը...,—կամաց ձայնով ընդմիջեց ինձ Պ. Շանշեանը։—Կը տեսնէք այս ծառը,— դեռեւս նստելով՝ շարունակեց նա—, որա տակ ես որքա՜ն անգամ մխիթարուած եմ իմ աղօթքներով, որոց մէջ ես միշտ խնդրած եմ ամենիս համար ճշմարիտ Աստուածսիրութիւն, ճշմարիտ եղբայրսիրութիւն եւ ճշմարիտ Ուսումնասիրութիւն...։

—Ո՞ւր է թէ մենք արթութեամբ եւ հաստատապէս կամենայինք մեզ միշտ վարժեցնել արթնկենցաղ լինելու, առանց որոյ Սիրոյ սուրբ զօրութիւնը չի կարող մեր մէջ զարգանալ դէպ ի մեր երկնաւոր Հայրը, դէպ ի մարդկութիւնը և դէպ ի դիտութիւնները...։

—Տեսէք որքա՜ն այս բաղմաթիւ եւ դոյնզդոյն ծաղիկները՝ միմեանց մօտ բուսած՝ խաղաղութեամբ իրենց կեանքը կը վարեն և կը բաւականանան մեր ամենի մօր—հողի—տուած մնունդներով...։

—Ինչո՞ւ մենք եւս մեզ կերակրող մօր—հողի—նման չենք կերակրեր մեր քաղցած եղբայրներին, այլ կը չանամք միայն միմեանց ուշեցածը խորանակութեամբ կամ ուժով խլել և միմեանց մերկ ու խաղցած թողնել...։ Ուրեմն, այս ծաղիկների չափ ալ չգիտենք կենցաղավարել...։ Սոքա իրենց մօր—հողի—գրկին մէջ ազատօրէն կը կերակրուին, կը զարգանան և կը հասունանան, իսկ մենք որքա՜ն կաշկանդումներ կը յառաջացնենք մեր ֆիզիքական, մտաւորական և բարոյական ոյժերի զարգացման ժամանակ...։

— Հապա նայեցէք այս թռչունի վրայ,—շարունակեց Պ. Շանշեանը—, տեսէք՝ նորա դայլայլիկները որքա՜ն քաղցր տպաւորութիւն կը թողնեն մեզ, լսողներիս վրայ...։

— Նոքա բնութեան հարազատ զաւակներն են, դորա համար նոքա իրենց բոլոր ձիրքերով կը զարգանան բնականապէս..., երկնաւոր մեր Հօր գրած օրէնքների համեմատ...։ Իսկ մենք բնական որդեգրութենէ դրեթէ բոլորովին խորթացած՝ մեր դրած արհեստական ու արուեստական կանոնների համեմատ կը զարգանանք եւ կը զարգացընենք մեր բոլոր ձիրքերը հազար ու մէկ կաշկանդումներով ու անկանոնութիւններով...։ Նոքա՝ բընական ճանապարհով ընթանալով՝ իրենց տեսակի մէջ կ'աշնուանան, իսկ մենք մեր անբնական ճանապարհով մեզ ակնյայտնի կաշտաեռնեմ...։

—Այո՛, այո՛, Պ. Սամուէլեա՛ն, մոլորութիւնը մեծ է... բայց յաղթելի է...,—աւելացրեց Պ. Շանշեանը։

Այս միջոցին պահապանը մեզ հրաւիրեց թէյի։ Արեւը արդէն մայր էր մտած։ Մենք դեռեւս բարձր ափով սկսեցինք տուն վե-

(*) Տե՛ս 2681դ թերթը

բաղառնալ։ Ձանապարհին կանգ-նեցինք աղբիւրի առաջ, ուրտեղ և քիչ նստանք եւ աղբիւրի ջով ջրէն խմեցինք։

—Այս պատուական աղբիւրի ջով ու պարզ ջուրն ալ խմելով՝ որքա՜ն մարդս կը լեցուի բարոյական զգացմունքներով ու մտքերով, — ասաց Պ. Շանչեանը, շարունակելով իր ճանապարհը։

—Այո՛, քանի նորա ջուրը պարզ վճիտ ու զով է, խմողը միշտ նորա-նով կը զովանայ, ծարաւը կանցընէ եւ կը լիանայ։ Ո՞ւր է թէ մենք ալ կարողանայինք լինել մտի, խօսի եւ գործի աղբիւրներ, եւ միշտ արտադրեինք այս աղբիւրի պէս պարզ ու քաղցր մտքեր, վնասից ու սիրտ զովացնող եւ մխիթարող խօսքեր, եւ կարօտեալներին լիացնող գործեր..., ասելացրի ես։

Այս միջոցին Պ. Շանչեանը ցոյց տուեց մըչխիւնների ահագին երամը, որոյ մի մասը՝ բեռնաւորուած պաշարով՝ կ'երթար մի կողմը, իսկ միւս մասը՝ հակառակ կողմէն՝ կը դառնար անբեռն։

—Տեսէ՛ք աշխատասիրութեան և համերաշխութեան գեղեցկագոյն օրինակը...։

—Մեր երկնաւոր Հայրը մեզ մարդկանցս՝ամէն կենաց-բաշխիչին իր ստեղծած հրաշալի բնութեան միջոցաւ դիշեր ու ցերեկ՝ անդադար՝ որքա՜ն՝ մեր բարոյական, մտաւորական եւ մարմնական զարգացման համար՝ դասեր կը տայ... դասե՞ր յաւիտենական..., որովհետեւ նորա օրէնքնե՛րն ալ յաւիտենական են...։

—Տեսնել եւ լսել գիւցոդի համար այդ ամենը դժուարին չէ...դիւրին է սովորիլ...զուարթադէմ աւելացրեց Պ. Շանչեանը։

Մեր ճանապարհը շարունակելով՝ մենք կը բարձրանայինք զառիվերը եւ հեռուհեռէ կը մօտենայինք տան։

—Չառիվա՛յրն ալ ուրախութիւնով իջանք, զառիվե՛րն ալ բարձրացանք։ Նոյնպէս պէտք է վարուիլ և մեր կենաց զառիվայրերի և զառիվերերի վերաբերութեամբ, — դառնալով դէպ ի ինձ՝ ասաց Պ. Շանչեանը։

—Եթէ մեր բոլոր կեանքի կէս նպատակը մեր երկնաւոր Հօր ճշմարիտ զաւակը լինելն է, Նորա սահմանած անփոփոխելի բարոյագիտական, մտաւորական և ֆիզիքական օրէնքների համեմատ կենցաղավարելն է, այն ժամանակ մեր կենաց բոլոր զառիվայրերը եւ զառիվերերը կարող ենք անցնիլ նոյն ուրախութիւնով, ինչ ուրախութիւնով որ անցանք այն զառիվայրը և այս զառիվերը։

—Մարդոյ հոգեկան եւ մարմնական կեանքի մոլորութիւններին, օրինազանցութիւններին կատարեալապէս յաղթելու համար, պէտք է այդ նպատակով կենցաղավարել, որ մի օր մենք ալ Քրիստոսի հետ կարողանանք ասել՝ «Յաղթեցի աշխարհի»....

—Եւ յիրաւի, պիտի արժանանա՞նք արդեօք մի օր ասել՝ «Յաղթեցի մոլորութիւնների, օրինազանցութիւնների և դազանութիւնների աշխարհին»...։ Քրիստոսանդ այդ վեհագոյն օրինակին մեզ պարտք է հետեւիլ, քանի որ կը համարձակուինք Նորա Սուրբ Անունը առնուլ մեզ վրայ՝ Քրիստոնեայ մեզ անուանելով...,— ասացի ես։

Այսպէս իրար հետ խօսելով՝ մենք հասանք տուն։ Ինքնաեռը դրուած էր սեղանի վրայ։ Մենք նստանք մօտ և սկսեցինք զբաղուիլ սեղանի ծառայութիւնով։

—Պ. Մովսէ՛ս, դուք ձեր սեղանի ծառայութիւնը չարունակեցէք— ոտքի կանգնելով ասաց Պ. Շանչեանը,— իսկ ես երթամ այցելեմ իմ հիւանդ եղբայրներիս։

Այս ասելով՝ նա իսկոյն դուրս ելաւ սենեակից և գնաց հիւանդների մօտ։

Ես իբրեւ սիրահար, ոգեւորուող բարոյագիտական կենցաղավարութեամբ, չկարողացայ միայնակ նստիլ սենեակի մէջ և չսպասեցայ հիւանդների կողմը։ Իմ հիացմանս չափ չկար, երբ տեսայ Պ. Շանչեանին՝ պատանեկի մօտ նստած, որին՝ գլխին վրայ դրած իւր ձեռքը՝ վրացերէն լեզուով մի բան ուրախ-ուրախ կը պատմէր։

Ես ներս մտնելով՝ ներողութիւն խնդրեցի համարձակութեանս համար և յայտնեցի.

—Ինձ համար շատ աւելի թանկ է տեսնել ձեր ամէն մի արածը, քան թէ խօսածը. դորա համար և համարձակուեցայ՝ առանց ձեզ յայտնելու նախապէս՝ այստեղ գալ։ Խնդրեմ ինձ ներեցէք։

— Քրիստոս մեզ ասել է՝ «Նախ առնել և ապա ուսուցանել». դուք այստեղ գալով՝ Քրիստոսի այդ Սուրբ Հրամանը կատարեցիք։ Այստեղ գալով՝ դուք կուզէք սովորի՛լ թէ ի՞նչպէս պէտք է նախ գործել և յետոյ սովորեցնել։ Այո՛, նախ պէտք է գիտենալ այսպիսի կարօտեալներին հայրաբար և եղբայրաբար խնամել և ապա ուրիշներին ուսուցանել նոյնը անել։

— Պ. Շանչեանը մեր խօսակցութիւնը իսկոյն թարգմանեց իւր թանկագին հիւրերին՝ լի ուրախութեամբ...։ Կերևէր՝ որ նորա անմեղ ուրախութեան պատճառը իւր հիւանդ հիւրերն էին...։ Պ. Շանչեանի ուրախութիւնը անչափ էր...։ Այո՛, անչափ էր, որովհետեւ նա կը կատարէր Քրիստոսի պատուէրը՝ «սիրէ քո ընկերին աւելի, քան թէ քո անձը»։ Նա ինքը դեռ թէեւ չխմած՝ հիւրերին կը խմեցնէր. ինքը դեռ ոչինչ չկերած՝ նոցա կը կերակրէր. իւր մարմնոյ տկարութիւնը մեկդի թողած՝ հիւրերի հիւանդութիւնները կը բժշկէր...։ Եւ երթէ ես՝ նորան միտքը ձգելով՝ չհրաւիրէի թէյի՝ նա անշուշտ մինչև կէս դիշեր ալ կը մնար նոցա մօտ՝ քաղցած ու ծարաւ...։ Դիշեր բարի մաղթելով հիւանդ հիւրերին՝ մենք գնացինք մեր սենեակը թէյ խմելու։

— Ես կը խնդրեմ Թոյլ տալ ինձ միայն սեղանին ծառայելու,— ասացի ես և սկսեցի երկուսիս թէյ լեցնել։

Սեղանի վրայ դրուած էր մի ման մածուն, մի ման կաթ և երկու նկանակ։ Ես ալ բերի իմ ունեցած պանրի և ապուխտի տեսակները ու կէս չիշ գինի։ Ամեն տեսակէ երկուքս ալ կերանք և յետոյ թէյ խմեցինք։ Խօսակցութիւնը մեր մէջ տևեց մինչև կէս դիշեր. այնուհետև՝ միմեանց բարի գիշեր ցանկանալով՝ ես դնացի իմ սենեակը և՝ շատ վատ տպաւորութեան տակ՝ մտայ անկողինս, ուրտեղ չուտով քուն չկարողացայ լինել հոգեկան վրդովմունքիս պատճառով...։

— Այդ մե՛ծ անիրաւութիւն է... անիրաւութի՛ւն... անիրաւութի՛ւն, — բառերը բարձր ձայնով արտասանելով, ես քունէս զարթեցայ, և որքա՜ն ուրախացայ, երբ՝ անկողնիս մէջ նստած՝ հասկացայ, որ տեսածս իրողութիւն չէր, այլ սոսկալի՛ երազ մի...։ Բայց այնուհետև ես ամենևին չկարողացայ քնանալ և մնացի արթուն մինչև առաւօտ։ Այդ միջոցին ժամը երեքն էր, որ ես սկսեցի մտաբերել իմ սոսկալի երազի մանրամասնութիւնները։

Երազս այս էր.

Մի մեծ դահլիճի մէջ ամբիոնի վրայ նստած էր Մատթէոս կաթուղիկոսը. իսկ պատերի մօտ՝ դահլիճի երկու կողմն շարուած էին Սինոդականները և բոլոր էջմիածնայ միաբանութիւնը։ Դահլիճի մէջտեղը կանգնած էր Պ. Պետրոս Շանչեանը և նորա դէմը երկու շարք շարուած էին Շուշոյ հայ — հոգեւորականութեան և հասարակութեան ներկայացուցիչները։ Կաթուղիկոսը զայրացած ձայնով կը հարցնէր Շուշեցւոց.

— Ի՞նչ ունիք ասելու այս մոլորեցուցչի համար, — ցոյց տալով Շանչեանի վրայ։

— Սրբազա՛ն Տէր, սա մեր Սեմինարիայի Տեսուչն է, և կը մոլորեցընէ մեր աշակերտներին...։ Մեր հայ լուսաւորչական կրօնքի դէմ, մեր սուրբ հաւատի հակառակ բաներ կը սովրեցնէ մեր զաւակներին։ Պաս ասած բանդ ամենևին չի ճանչնար։ Մենք խոնարհաբար կը խնդրենք, որ Ձերդ Ս. Օծութիւն բարեհաճի նորան՝ մեր Սուրբ Լուսաւորչի օրէնքով խիստ կերպով պատժելէ վերջը՝ եւ պատժել տալ տէրութեան օրէնքով։ Նա կախուելու արժանի է, կը ոռնային բոլորը միասին։

— Այ անիծեալ մոլորեցուցիչ, թէեւ դու կախաղանի արժանի ես, բայց ես քեզ միայն կը բանադրեմ իբրեւ Ամենայն Հայոց Կաթուղիկոս եւ՝ ուր հարկն է՝ այդ մասին կը յայտնեմ։ Այսուհետեւ դու քո Տեսչական պաշտօնէ արձակուած ես իբրեւ մոլորեցուցիչ հայ մանկտւոյն։

—Ես ոչ ոքին մոլորեցնող չեմ, Սրբազան Տէ՛ր, որովհետեւ ես նախ գործով եւ ապա խօսքով սովորեցընող եմ բոլորին հետեւեալները.

1. Սիրել բոլոր հոգւով և ճշմարտութիւնով մեր երկնաւոր Հօր, Նորա Միածին Որդւոյն եւ Սուրբ Հոգւոյն։

2. Սիրել ամէն մէկին աւելի, քան իւր անձը։

3. Կատարեալ մարդ լինելու համար՝ սիրել բոլոր հոգւով գիտութիւնը։

— Տարէ՛ք այս մոլորեցուցչին բանտ,—գոռալով ասաց կաթուղիկոսը։

Այն ժամանակ բոլորը թափեցան Շանչեանի վրայ ու զարնելով, թքնելով, քաշքշելով սկսեցին նորան տանել...։

—Այդ մե՛ծ անիրաւութիւն է... անիրաւութի՛ւն.. անիրաւութի՛ւն, —բառերը բարձր ձայնով արտասանելով՝ ես զարթեցայ, և որքա՜ն ուրախացայ, երբ՝ անկողնիս մէջ նստած՝ հասկացայ, որ տեսածս իրողութիւն չէր, այլ սոսկալի՛ երազ մի...։ Բայց այնուհետև ես ամենևին չկարողացայ քնանալ և մնացի արթուն մինչև առաւօտ։ Այդ միջոցին ժամը երեքն էր, որ ես սկսեցի մտաբերել իմ սոսկալի երազի մանրամասնութիւնները։

Երազս այս էր.

Մի մեծ դահլիճի մէջ ամբիոնի վրայ նստած էր Մատթէոս կաթուղիկոսը. իսկ պատերի մօտ՝ դահլիճի երկու կողմն շարուած էին Սինոդականները և բոլոր էջմիածնայ միաբանութիւնը։ Դահլիճի մէջտեղը կանգնած էր Պ. Պետրոս Շանչեանը և նորա դէմը երկու շարք շարուած էին Շուշոյ հայ — հոգեւորականութեան և հասարակութեան ներկայացուցիչները,

ԺԳԺՎՈՆ ԴՎՃՈՏՄՈ

Փոստային տրեֆօրեայ sogo

Ընկերներ, ես ուրախ եմ ձեզ տեսնելու, որ հավաքվել եք այստեղ, որպեսզի քննարկեք ձեր գործերը։ Ես ուրախ եմ, որ ձեր մեջ կան շատ երիտասարդներ, որոնք ցանկանում են սովորել։ Ես ուրախ եմ, որ ձեր մեջ կան շատ կանայք, որոնք ցանկանում են սովորել։ Ես ուրախ եմ, որ ձեր մեջ կան շատ մարդիկ

— Ի՞նչ է ասել ուզում։

— Ես ուզում եմ ասել, որ ինչ-որ մեկը մեր ընկերներից մեկին ուղարկել է Ամերիկա՝ ինչ-որ գործ անելու։ Ես չգիտեմ, թե ինչ գործ է դա, բայց գիտեմ, որ այդ մեկը մեր ընկերներից մեկն է։

— Ինչպե՞ս կարող ես դա ասել, եթե չգիտես, թե ինչ գործ է դա։

— Ես գիտեմ, որովհետև ես ինքս եմ ուղարկել նրան։

— Ինչպե՞ս կարող ես դա ան